ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Կերպարվեստ 2» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2024. - 40 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ. գ. թ., դոցենտ Սվաջյան Ա. Հ.

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Հեղինակներ՝
Սարգսյան Ս. Մ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի «Կերպարվեստ 2» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN **ՀՏԴ**
Տպաքանակը՝ 150 օրինակ **ԳՄԴ**

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 12

ՆԱԽԱԳԻԾ 31

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 33

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 38

ՆԱԽԱԲԱՆ

«Կերպարվեստ» առարկայի 2-րդ դասարանի աշխատանքային գիրք-տետրի ծրագրային բովանդակության թեմատիկ ամբողջականությունը և հաջորդականությունը ենթադրում են կերպարվեստի հետ ամուր հուզական կապի ստեղծում ուսուցման յուրաքանչյուր փուլում՝ բացառելով մեխանիկական կրկնությունները և ապահովելով սովորողի աստիճանական գեղարվեստական աճը:

Աշխատանքային գիրք-տետրի բովանդակությունը համապատասխանում է հետևյալ նպատակներին.

- հուզազգայական ոլորտի, ստեղծագործական ներուժի, զուգորդական, կերպարային մտածողության, երևակայության և ընկալունակության, զգացողությունների, ձեռքի մանր շարժունակության, տարածական երևակայության, տեխնիկական և տրամաբանական մտածողության, աչքաչափի զարգացում,
- հիմնական հասկացությունների մասին գիտելիքների, դրանց հիման վրա աշխատանքային ունակությունների ու հմտությունների, գործնական փորձի, գործունեության պլանավորման և կազմակերպման միջոցների ձևավորում,
- ճանաչողական համընդհանուր ուսումնական գործառնությունների՝ դիտարկում - համեմատում - վերլուծություն - դասակարգում - ընդհանրացում, նախնական ընկալումների ձևավորում,
- շրջապատող աշխարհը վերափոխելու՝ մարդու աշխատանքային գործունեության դերի և ձեռակերտ աշխարհի առարկաների ստեղծման կանոնների, ժողովրդական

ավանդույթների, մասնագիտությունների մասին պատկերացումների ձևավորում,

- գեղարվեստական իմացությունների և աշխատանքային գործունեության դերի մասին գիտելիքների յուրացում,
- աշխատասիրության, աշխատանքի արդյունքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի, տեղեկատվական և հաղորդակցական գործունեության նկատմամբ հետաքրքրության դաստիարակում:

«Կերպարվեստ 2» աշխատանքային գիրք-տետրը հնարավորություն է ընձեռում լուծել սոցիալական, առարկայական և անձնային հետևյալ խնդիրները.

- ձևավորել պատկերացումներ կերպարվեստի՝ մարդու կյանքում ունեցած դերի և նրա հոգևոր-բարոյական զարգացման մասին,
- ձևավորել ճանաչողական հետաքրքրություն և դրական վերաբերմունք կերպարվեստի նկատմամբ,
- ուսուցանել կերպարվեստի տարրական արտահայտչաձևերի տեսական և գործնական հիմունքները,
- ձևավորել գեղագիտական վերաբերմունք շրջապատող իրականության նկատմամբ. գեղեցկության՝ որպես արժեքի ընկալում, ինչպես նաև գեղարվեստական գործունեության և արվեստի հետ հաղորդակցության պահանջմունք,
- ձևավորել կերպարվեստի ստեղծագործությունների ընկալման, վերլուծության և գնահատման գործնական ունակություններ և հմտություններ, կերպարվեստի լեզուն հասկանալու, կերպարվեստային ստեղծագործությունների արտահայտչականության միջոցները վերլուծելու ունակություն,

- զարգացնել իրենց աշխատանքներում շրջապատող իրականության նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու ունակություն,
- ուսումնասիրել գեղարվեստական արտահայտչականության միջոցները՝ լույս և ստվեր, ուրվագիծ, ուրվապատկեր, ձև, ծավալ, գույն, գունահամակարգ, մակատեսք, երանգ, հորինվածք, ներդաշնակություն և այլն,
- զարգացնել ստեղծագործական երևակայությունը, գեղարվեստական մտածողությունը, տեսողական հիշողությունը, տարածական պատկերացումները, կերպարվեստային ընդունակությունները,
- զարգացնել անձի հուզական-գեղագիտական և բարոյագիտական ոլորտը:

«Կերպարվեստ 2» աշխատանքային գիրք-տետրը տրամաբանական շարունակությունն է «Կերպարվեստ 1» աշխատանքային գիրք-տետրի, որոնց հիմքում ուսուցման շտկող-զարգացնող սկզբունքն է, ինչպես նաև կերպարվեստի ընդհանուր զարգացնող հնարավորությունների իրացումը ներառական կրթության մեջ:

Առաջադրանքները բովանդակում են կերպարվեստային այնպիսի գիտելիքների և հմտությունների կիրառում և ամրապնդում, որոնք աշակերտները ձեռք են բերել նախորդ ուսումնական տարվա ընթացքում, ինչպես նաև ենթադրում են ուսումնական տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքների արտահայտում: Հանձնարարությունները ներառում են սովորողների սեփական փորձառությամբ կերպարվեստային օրինաչափությունների բացահայտում, աշխատանք կերպարվեստային տարբեր նյութերի օգտագործմամբ և տեխնիկական տարբեր հնարավորություններով, զարգացնում սովորողների տարածական պատկերացումները և

ծավալային ընկալումը, պարզ երկրաչափական պատկերների և մարմինների մեջ աշխարհը տեսնելու և բացահայտելու ունակությունները, հայտնաբերում լույսի և ստվերի, ուրվագծի և ուրվապատկերի, ձևի և ծավալի փոխառնչությունները, դրանց պատկերման հաջորդական քայլերը: Համադրելուն, զուգորդելուն միտված առաջադրանքները նպաստում են սովորողների զուգորդական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար նրանք օգտագործում են տարբեր նյութեր, մոտեցումներ, ձևավորում համապատասխան բառապաշար, ստեղծում պատկերներ, ապլիկացիաներ, ծավալային աշխատանքներ:

Գիրք-տետրում ներառված նախագծային աշխատանքի նպատակն է աշակերտներին մղել ոչ միայն ինքնուրույն բացահայտելու շրջապատող միջավայրում հանդիպող տարբեր նյութերի տարբերություններն ու նյութականությունը, նրանց բազմազան մակերևույթները, այլև աչքը վարժեցնել նկատելու, որսալու պատկերման արժանի ամեն ինչ, ինչպես նաև հաղորդել ուսումնական գործընթացում ստեղծագործական նոր մոտեցումներ դրսևորելու համարձակություն:

Աշխատանքային գիրք-տետրը կառուցված է շրջապատող իրականության անմիջական ընկալումների, այդ ընկալումները զուգորդելու, վերլուծելու, ընդհանրացնելու և գեղարվեստական լեզվով արտահայտելու սկզբունքով: Բովանդակությունը միտված է գեղարվեստական կրթության նախնական գիտելիքների հաղորդմանը, գեղարվեստական արտահայտման տարրական հմտությունների ձևավորմանը, գեղարվեստական-տեխնոլոգիական գործունեության միջոցների յուրացմանը, աշակերտի

ստեղծագործական ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Սովորողների գեղարվեստաստեղծագործական գործունեությունն իրականացվում է՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները: Գիրք-տետրը կօգնի ընկալել և ճանաչել շրջապատող աշխարհը, համեմատության միջոցով բացահայտել առանձին առարկաների բնութագրիչները, վերլուծել համեմատության արդյունքները և արտահայտել կերպարվեստի լեզվով: Աշակերտները սովորում են աշխատել պարզագույն նշանային, գրաֆիկական մոդելներով գեղարվեստական պատկերի բնութագրական առանձնահատկությունների արտահայտման համար, լուծել ստեղծագործական խնդիրներ զուգորումների և համադրումների, ստեղծագործականության մակարդակում, սեփական մտահղացմամբ կամ երևակայությամբ՝ դրսևորելով առանձնահատուկ մոտեցում: Առաջադրանքները ձևակերպելիս հաշվի են առնվել աշխատանքի անհատական և խմբային ձևերը: Անհատական աշխատանքում սովորողները յուրացնում են աշխատանքի նոր տեխնիկաներ, ձեռք են բերում կերպարվեստային տարրական գիտելիքներ: Զարգացման հնարավորությունները համատեղ ստեղծագործության մեջ խմբային աշխատանք ստեղծելիս ապահովում են ամբողջի մեջ մասերը տեսնելու, դրանք կողմնակի հայացքով ուսումնասիրելու ունակություն:

Կարելի է օգտագործել խմբային աշխատանքի տարբեր ձևեր՝ զույգերով կամ խմբերով: Այդպես աշակերտները սովորում են ծրագրել և համակարգել իրենց գործունեությունը, համաձայնության հասնել առաջադրանքի կատարման բովանդակության և ընթացքի հարցում, աշխատել կամ սովորել ոչ այնքան մրցակցային, որքան

համագործակցային մթնոլորտում: Ընդհանուր առմամբ, աշխատանքային գիրք-տետրում առաջարկվում է այնպիսի մոտեցում ուսումնական գործընթացին, որը ենթադրում է ուսուցչի գործունեության բազմազանություն, ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտենալու ինքնուրույնություն, աշակերտների անհատականության դրսևորման խրախուսում ուսուցչի կողմից:

Գիրք-տետրում առանձնացված են ուսուցման բովանդակության պարուրաձև սկզբունքի իրականացմանը նպաստող կառուցվածքային գծեր, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար ընդլայնել և բարդացնել այն՝ հաշվի առնելով ոչ միայն տարիքային և հոգեբանական փուլը, այլև յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունը: Ընդ որում, կապ է ստեղծվում գեղարվեստական ստեղծագործական գործունեության և շրջապատող իրականության միջև: Կերպարվեստի լեզվի հիմունքները իրացվում են սովորողների կերպարվեստային գործունեության ընթացքում:

Գիրք-տետրը ներառում է այնպիսի ընդհանրական գիտելիքներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս կերպարվեստային գրագիտության առանցքային հասկացությունների և նրանց ներքին կապերի ու առնչությունների մասին:

Աշխատանքային գիրք-տետրը բաղկացած է 3 հիմնական բաժիններից, որոնք ապահովում են որոշակի գիտելիքների, ունակությունների ու հմտությունների պարտադիր պահանջներ, մեկ նախագծային աշխատանքից, ինչպես նաև հավելվածից և ուսուցչի գրառումների համար նախատեսված բաժնից:

Յուրաքանչյուր բաժին ամփոփվում է որոշակի վարժություններով, որոնք պարունակում են նախորդ թեմայի հիմնական գաղափարը և հաջորդ թեմայի նախնական բովանդակությունը: Այդ

առաջադրանքները կարելի է դիտարկել որպես ձևավորող գնահատականի հիմք:

Բովանդակային կառուցվածքը՝ «Լույս և ստվեր», «Ուրվագիծ, ուրվապատկեր և ձև», «Ձև և ծավալ», ուսուցչին լայն հնարավորություն է ընձեռում դասը կազմակերպել առավել ճկուն և արդյունավետ: Առաջադրանքները կառուցված են փոխլրացնող կապերով, և ուսուցիչը դասը կարող է սկսել ցանկացած առաջադրանքից, ապա անցնել հաջորդին՝ ըստ առաջադրված նպատակի և դրանից բխող խնդիրների:



Առաջադրանքները, որոնք կազմված են աշակերտների հնարավորությունների սահմաններում, ընդհանուր առմամբ օգնում են նրանց մոտ զարգացնել տարբեր հմտություններ: Դրանք համապատասխանեցված են նրանց ընդունակություններին ու հնարավորություններին, հետևաբար միևնույն առաջադրանքի կամ թեմայի շրջանակներում կարելի է կիրառել բարդության տարբեր

աստիճանի առաջադրանքներ: Մասնավորապես, թեմատիկ առաջադրանքներ հանձնարարելու դեպքում կարևոր է, որ դրանք սովորողին ակտիվ մասնակցելու, հետազոտելու, բացահայտելու, գիտափորձեր անելու հնարավորություն ընձեռեն:

Տարբեր առաջադրանքների համար սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մանկավարժական իրավիճակներ, որոնց մեջ հայտնվելով՝ սովորողները հնարավորություն կունենան դրսևորելու, ինչպես նաև զարգացնելու որոշակի կարողություններ՝ վերլուծելու, պլանավորելու, ինքնարտահայտվելու, գնահատելու, համադրելու և այլն, և որակներ՝ նպատակասլացություն, համբերատարություն, հանդուրժողականություն և այլն:

Անհրաժեշտ է դասընթացում ներառել ոչ միայն առաջարկվող, այլև նույն թեման ուսումնասիրող տարաբնույթ առաջադրանքներ, որոնք հնարավոր է իրականացնել տարբեր ձևաչափերով, անհատական, զույգերով կամ խմբերով:

Կարևոր է սովորողներին բացատրել առաջադրանքների նպատակն ու այն հմտությունների իրական նշանակությունը, որոնք դրանք զարգացնում են: Ուսումնական շահագրգռությունը խթանելու նպատակով կարևոր է, որ առաջադրանքները կապված լինեն սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների, նրանց առօրյայի հետ: Դա ապահովելու նպատակով կարելի է աշակերտներին ընտրելու հնարավորություն տալ:

Հարկ է նշել, որ պետք չէ սահմանափակվել վերջնարդյունքնե-րով: Անհրաժեշտ է դրանք ուղղել որոշակի կարողությունների և ունակությունների, մասնավորապես՝ գիտելիքների, հմտությունների ձևավորմանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Առաջադրանք 1

Անվանի՛ր/ցու՛յց տուր՝ լույսի ի՞նչ աղբյուրներ գիտես:

Ներկայացված լուսանկարների միջոցով աշակերտը վերհիշում, ծանոթանում և ամրապնդում է լույսի տարբեր աղբյուրների մասին իր իմացությունները, անվանում կամ ցույց է տալիս լուսանկարներում պատկերված առարկաները: Խոսքի բացակայության դեպքում կարող է ցույց տալ համապատասխան պատկերները:

Առաջադրանք 2

Լույսի արդյունքում առաջանում են ստվերներ: Ուսումնասիրի՛ր շուրջդ առաջացած ստվերները, ցու՛յց տուր լույսերը:

Լույսի մասին պատկերացումներն ամրապնդելով՝ աշակերտին կարելի է առաջարկել ցույց տալ դասասենյակում առկա լույսերը և ուղղորդել բացահայտելու ստվերները: Կարելի է աշակերտներին բացատրել, որ եթե չլինի լույսը, չի լինի և ստվերը, կամ ստվերը առաջանում է լույսի արդյունքում: Ասվածը տեսողականորեն համոզիչ դարձնելու համար դասասենյակի լուսանկարի վրա կարելի է ցույց տալ ստվերները և առաջարկել մատիտով կամ գրիչով նշել լույսերը: Զուգահեռաբար կարելի է հարցնել, թե ինչի (ում) են նմանեցնում լույսը և ինչի (ում)՝ ստվերը:

Առաջադրանք 3

Ի՞նչ ստվերներ ես տեսնում:

Աշակերտը սովորում է ստվերի միջոցով ճանաչել առարկան, միևնույն ժամանակ դիտարկել ստվերը որպես լույսի արդյունք: Եթե դասասենյակում առկա է լույսի համապատասխան աղբյուր,

աշակերտը կարող է բացահայտել իր ստվերը և մարմնի, ձեռքերի ու ոտքերի շարժումներով ստանալ յուրօրինակ ստվերապատկերներ:

Առաջադրանք 4

Կողքի դատարկ թղթի վրա գտի՛ր ընկերոջդ կամ քո ձեռքի ստվերը և եզրագծի՛ր:

Առաջադրանք 5

Ձեռքիդ ստվերը եզրագծելուց հետո ընդգծի՛ր գունավոր մատիտով: Պատկերացրու՝ ինչի՞ է նման:

Նկարի՛ր աչքերը, քիթը, բերանը:

Աշակերտը մոտենում է լուսամուտին, որտեղ լույսն ավելի ակտիվ է, մաքուր թղթի վրա գտնում սեփական կամ ընկերոջ ձեռքի ստվերը և եզրագծում այն: Քանի որ ձեռքն անընդհատ շարժման մեջ է, ձեռքի եզրագիծը հստակ չի լինի, սակայն ինչ-որ պատկեր կստացվի: Դժվարության դեպքում կարելի է ցույց տալ սեփական օրինակով և առաջարկել կրկնել: Ուսուցիչն առաջարկում է եզրագիծն ընդգծել գունավոր մատիտով, ապա հարցնում, թե ինչ կենդանու է նման: Համապատասխանաբար աշակերտին հանձնարարվում է զարգացնել կերպարը և պատմել նրա մասին: Եթե աշակերտը դժվարանում է ինքնուրույն նկարել և պատմել, կարելի է ձեքից բռնել և օգնել, որ ամբողջականացնի նկարը, իսկ հետո միասին նկարագրել (նկար 1):

Նկար 1

Ձեռքի ստվերի եզրագծով ստացված կերպար



Առաջադրանք 6

Վերհիշի՛ր գույները, թվարկի՛ր հիմնական և բաղադրյալ գույները: Գունային շրջանի վրա ցո՛ւյց տուր գույների լուսավոր և մուգ հատվածները: Այդ հատվածները կոչվում են գույնի երանգներ:

Առաջարկվում է թվարկել և մատնանշել հիմնական և բաղադրյալ գույները, որոնց աշակերտը ծանոթացել է նախորդ ուսումնական տարում: Տվյալ առաջադրանքով ծանոթանում է գույների երանգներին, որն էլ համապատասխանաբար ընկալվում է որպես տվյալ գույնի լուսավոր կամ ստվերոտ հատված: Դժվարության դեպքում կարելի է հարցնել միայն հիմնական գույները:

Առաջադրանք 7

Գունավոր մատիտներով դատարկ վանդակները ներկի՛ր եզրագծի գույնի երանգներով: Օգտվի՛ր 6-րդ առաջադրանքի գունապնակից: Տողի վրա գրի՛ր այդ գույնի անունը:

Տվյալ առաջադրանքը նախորդ առաջադրանքի գործնական շարունակությունն է, որտեղ աշակերտը, մատիտի տարբեր ուղղություններով և տարբեր ուժգնությամբ սեղմելով, ներկում է վանդակները և ստանում տարբեր երանգներ: Միաժամանակ առաջարկվում է աշակերտներին յուրաքանչյուր վանդակի կողքին գրել տվյալ գույնի անունը:

Առաջադրանք 8

Թղթի ցանկացած հատված ներկի՛ր ջրաներկի որևէ գույնով, ապա վրձինը միայն ջրի մեջ թաթախելով՝ տարածի՛ր տվյալ գույնը թղթի ամբողջ մակերևույթով:

Ցու՛յց տուր գույնի՝ ստացված մուգ և բաց երանգները:

Եթե նախորդ առաջադրանքում աշակերտը մատիտով էր ստացել որևէ գույնի երանգ, այս առաջադրանքում ցանկացած գույնի տարբեր երանգները ստանում է ջրաներկի միջոցով: Շատ ջուր օգտագործելու դեպքում (ջրաներկի թաց տեխնիկա) կարելի է հասնել տվյալ գույնի ամենաբաց, սպիտակին (լույսին) մոտ երանգի: Դժվարության դեպքում կարելի է բռնել աշակերտի ձեռքից և ուղղորդել:

Առաջադրանք 9

Ջրաներկով և գունավոր մատիտներով շարունակի՛ր և ամբողջականացրու՛ բնանկարը:

Առաջադրանքը կատարելով՝ աշակերտն ակամա ձեռք է բերում խառը տեխնիկայով աշխատելու հմտություններ, որոշակի պատկերացում է ստանում բնանկարի մասին: Ձևավորվում է ուշադրություն, հետաքրքրություն շրջապատող աշխարհի՝ բնության նկատմամբ:

Առաջադրանք 10

Ուսումնասիրի՛ր, թե ինչպես երկրաչափական պատկերները միացնելով՝ ստացվում է երկրաչափական մարմին:

Ընդգծի՛ր խորանարդը:

Առաջադրանքում նախ ուսուցչի օգնությամբ աշակերտը վերհիշում է երկրաչափական պատկերների մասին իր իմացությունները, երկրաչափական պատկեր և երկրաչափական մարմին հասկացությունների տարբերությունը և ընդհանրությունը, ապա գործնականում արտահայտում երկչափ պատկերներից եռաչափ պատկերներ ստանալու հմտությունները:

Առաջադրանք 11

Եթե լույսի աղբյուրը ձախ կողմից է, ապա ո՞ր կողմում կպատկերես ստվերը: Ընդգծի՛ր նվերի տուփը և գունավորի՛ր:

Առաջադրանքն ամրապնդում է նախորդ առաջադրանքում ձեռք բերած գիտելիքները և աշակերտի մոտ ձևավորում լույսի աղբյուրի, համապատասխանաբար՝ առարկայի լուսավոր հատվածի և ստվերի մասին նոր գիտելիքներ: Եթե նախորդ առաջադրանքում աշակերտն ուղղանկյուններով (քառակուսիներով) ստանում է խորանարդ, ապա այստեղ այդ խորանարդն արդեն նվերի տուփի տեսք ունի և լույսերն ու ստվերներն աշակերտը պատկերում է գունավոր մատիտներով: Նույն առաջադրանքը կարելի է ցուցադրել տարածության մեջ՝ թղթից կտրելով երկրաչափական պատկերներ և սոսնձել (կարելի է օգտագործել նաև գունավոր թղթեր):

Առաջադրանք 12

Երկրաչափական պատկերների միջոցով կարելի է նկարել նաև կենդանիներ: Ներկի՛ր թութակը քո նախընտրած գույներով:

Առաջադրանք 13

Ի՞նչ կարող ես նկարել երկրաչափական պատկերներով:

Առաջադրանքներն օգնում են շրջապատող աշխարհի իրերի մեջ տեսնել և բացահայտել երկրաչափական պատկերները, երկրաչափական մարմինները, ինչը նպաստում է դրանց պատկերման հմտությունների զարգացմանը (պատկերման երկրաչափական մեթոդ): Տանիք՝ եռանկյուններ → բուրգ, ծառ՝ շրջան → գունդ, բաժակ՝ շրջան, ուղղանկյուն → գլան և այլն: Ուսումնասիրելով վերոնշյալը՝ աշակերտին հանձնարարվում է ինքնուրույն պատկերել իրեն շրջա-

պատող առարկաներ՝ օգտագործելով պարզ երկրաչափական պատկերներ և մարմիններ: Սափորը կարելի է պատկերել՝ հիմքում կառուցելով շրջան կամ գունդ, գլան, խորանարդ, հատած կոն, եռանկյուն և այլն: Ստորև ներկայացված օրինակն ակնառու ցուցադրում է, թե ինչպես կարելի է պատկերել սափորը երկրաչափական պատկերների և երկրաչափական մարմինների միջոցով (նկար 2):

Նկար 2

Սափորի կառուցում երկրաչափական պատկերներով և երկրաչափական մարմիններով



Առաջադրանք 14

Նայի՛ր օրինակին և, հասարակ մատիտը տարբեր ուղղությամբ և ուժգնությամբ սեղմելով, ստացի՛ր կիսաստվերներ և ստվերներ:

Երանգային (լույս և ստվեր) նկարչության առանձնահատկություններն ուսումնասիրելու պարզագույն առաջադրանք է, որտեղ աշակերտը տարբեր կարծրության հասարակ մատիտներով (H, HB, B, 2B և այլն) ուսումնասիրում է լույսի արտահայտման և ստվերի ընդգծման առանձնահատկությունները: Նախ տրված է սպիտակից մինչև սև ընկած հատվածի երանգավորումը համակարգչային լուծումով, ապա ներքևի սյունակում՝ տվյալ երանգի համապատասխան աստիճանն արտահայտող գծապատումը: Ստորև ներկայացված երկու սյունակներից մեկում աշակերտը հատվածաբար, տարբեր կարծրության հասարակ մատիտը տարբեր ուղղություններով և տարբեր ուժգնությամբ սեղմելով, «կրկնօրինակում» է վերոնշյալ երանգը, հաջորդիվ, առանց հատվածների բաժանելու նույն տեխնիկայով ստանում է երանգային հարաբերությունները՝ սպիտակից մինչև սևը ներառյալ: Այս վարժությունն առաջին քայլն է հետագայում լույսը և ստվերները ինչպես մեկ գույնի երանգներով, այնպես էլ տարբեր գույներով արտահայտելու համապատկերում (նկար 3):

Նկար 3

Հասարակ մատիտով տարբեր ուղղություններով և տարբեր ուժգնությամբ սեղմելով ստացված երանգներ



Առաջադրանք 15

Նայի՛ր նկարներին և անվանի՛ր/ցու՛յց տուր մարմինները:

Ցո՛ւյց տուր լույսերն ու ստվերները:

Մեկ անգամ ևս կրկնելով երկրաչափական մարմինների անվանումները և ամրապնդելով երկչափ հարթության վրա եռաչափ պատկերի արտահայտման գիտելիքները՝ սովորողը բացահայտում է նախորդ առաջադրանքում կատարած երանգային նկարչության միջոցով ծավալների արտահայտման հնարավորությունները: Վերոնշյալ երկու առաջադրանքները գիրք-տետրի ձախ և աջ հատվածներում են, ինչը հնարավորություն է տալիս աշակերտին համեմատելու և հայտնաբերելու իր կատարած երանգային

վարժության և առաջարկված երկրաչափական մարմինների գծանկարի ընդհանրությունները:

Առաջադրանք 16

Ուսումնասիրի՛ր նկարը և մատիտով նշի՛ր, թե որն է ստվեր, որը՝ լույս: Նշի՛ր, պատին ի՞նչ ստվերներ ես տեսնում:

Առաջադրանք 17

Ի՞նչ ծաղիկի ստվեր ես տեսնում նկարում: Փակցրու՛ ծաղիկը համապատասխան տեղում (հավելված 1):

Առաջադրանքները հնարավորություն են տալիս ամրապնդել լույսի և ստվերի մասին ձեռք բերած գիտելիքները, զարգացնում են ուշադրությունը, տրամաբանությունը, երևակայությունը, վերլուծելու ունակությունը: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտին մատիտով համապատասխան տեղում նշել ստվերները և լույսերը, կամ պարզապես աշակերտը կարող է ցույց տալ դրանք: Կարելի է առաջարկել նաև մի քանի նախադասությամբ ներկայացնել «լույսի և ստվերի զրույցը»: Օրինակ՝ «Աղավնին ասաց...», կամ «Ու՞մ է փնտրում վարդի ստվերը» և այլն: Ուսուցիչը կարող է ուղղորդող հարցերով օգնել աշակերտին:

Առաջադրանք 18

Առարկաների գույները, լույսերն ու ստվերները, կախված լուսավորությունից, օրվա տվյալ ժամից և լուսավորության աղբյուրից, ենթարկվում են փոփոխության:

Առաջադրանք 19

Համեմատի՛ր աջ և ձախ կողմերի նկարները, ասա՛, թե ինչ փոփոխության են ենթարկվել առարկաների գույները, լույսերն ու ստվերները:

Կախված լուսավորությունից՝ փոխվում են առարկաների գույները, երանգները, հետևաբար՝ նաև լույսերն ու ստվերները: Ուսումնասիրելով լուսանկարները՝ աշակերտը բացահայտում է լույսի ազդեցությունը միջավայրի այս կամ այն կերպ ընկալման վրա: Նույն խնդիրը կարելի է դիտարկել՝ պատուհանագոգին դրված ծաղիկը տեղափոխելով դասասենյակի կենտրոնական հատված, և այլն: Դժվարության դեպքում կարելի է հուշող հարցեր տալ և ամրապնդել լույսի և ստվերի մասին գիտելիքը:

Առաջադրանք 20

Ի՞նչ ուրվագիծ ես տեսնում: Փակցրո՛ւ այն համապատասխան տեղում (հավելված 2):

Առաջադրանք 21

Ի՞նչ ուրվապատկեր ես տեսնում: Փակցրո՛ւ այն համապատասխան տեղում (հավելված 3):

Առաջադրանքներից յուրաքանչյուրի հարցադրմամբ արդեն սովորողը տարբերակում է ուրվագիծը ուրվապատկերից: Միևնույն ժամանակ ուրվագծերի և ուրվապատկերների միջոցով սովորողը նախ անվանում է, թե ինչ պատկեր է տեսնում, ապա հավելվածից օգտվելով, համապատասխան տեղում փակցնում է պատկերը՝ բացահայտելով տվյալ առարկայի ձևը: Առաջադրանքները զարգացնում են ուրվագծի և ուրվապատկերի միջոցով առարկան ճանաչելու ունակությունը, զուգորդելու հմտությունները:

Առաջադրանք 22

Մեծ սափորի ուրվապատկերի մեջ երևում է փոքր սափորի ուրվագիծը: Փակցրո՛ւ փոքր սափորն իր տեղում և հիշի՛ր, որ հայկական այդ սափորը 1900 տարեկան է (հավելված 4):

Առաջադրանք 23

Արտանկարի՛ր սափորը և վերականգնի՛ր զարդանախշերը:

Աշակերտը մեկ անգամ ևս ամրապնդում է ուրվագծի և ուրվապատկերի մասին իր գիտելիքները, ապա համապատասխան տեղում փակցնում սափորի պատկերը, որի զարդանախշերը վնասված են: Երևակայությամբ վերականգնում է սափորի վրայի զարդանախշերը՝ օգտվելով բնօրինակի լուսանկարից և կրկնելով չվնասված ու հստակ երևացող հատվածները ազատ ստեղծագործական մոտեցմամբ: Դժվարության դեպքում կարելի է թույլ եզրագծել, ապա հանձնարարել ամբողջականացնել և ներկել սափորը:

Առաջադրանք 24

Ուսումնասիրի՛ր զարդանախշի կառուցվածքը: Ընդգծի՛ր կետագծերը և բարակ գծերը: Հաջորդական քայլերով շարունակի՛ր կառուցել զարդանախշը և գունավորի՛ր:

Եթե նախորդ առաջադրանքում աշակերտը ստեղծագործաբար է պատկերում զարդանախշը՝ օգտվելով սափորի բնօրինակի լուսանկարից, այս առաջադրանքում արդեն ուսումնասիրում է զարդանախշի կառուցվածքը, ռիթմը, համաչափությունը: Քայլաշարով պատկերված զարդանախշը հաջորդաբար կրկնելով՝ ստացվում է զարդագոտի: Կետագծերով և բաց երանգով նախշերն ընդգծելով՝ աշակերտն աստիճանաբար մոտենում է զարդագոտու վերջին օղակին, որն ամբողջությամբ պատկերում է ինքնուրույն: Եթե

աշակերտը դժվարանում է ինքնուրույն կատարել առաջադրանքը, կարելի է մինչև վերջ նշել կետագծերը և ուղղորդել:

Առաջադրանք 25

Էջի հակառակ կողմն ամբողջությամբ ներկի՛ր սև թավ մատիտով: Գրիչով ընդգծի՛ր թիթեռի ուրվագիծը: Հաջորդ էջում կտեսնես նույն թիթեռի դաջվածքը:

Առաջադրանք 26

Էջն ամբողջությամբ ներկի՛ր սև թավ մատիտով:

Առաջադրանք 27

Թիթեռի ուրվագծի դաջվածքը ներկի՛ր ջրաներկով և գունավոր մատիտներով այնպես, որ մատիտի քսվածքը խառնվի թաց ջրաներկին:

Թիթեռի պատկերով էջի հակառակ կողմը աշակերտը ներկում է հասարակ թավ մատիտով, ապա վերադառնում թիթեռի պատկերով էջ և գրիչով ընդգծում թիթեռը: Էջը թերթելով՝ աշակերտը բացահայտում է կերպարվեստի՝ մինչ այդ իրեն անծանոթ՝ պատկերը դաջելով կրկնօրինակելու տեխնիկան: Աշակերտի մոտ զարգանում է համբերատարությունը, ձևավորվում փուլային աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը: Առաջարկվում է թիթեռի դաջվածքը ներկել ջրաներկով և մշակել գունավոր մատիտներով, ինչի արդյունքում աշակերտը ձեռք է բերում խառը տեխնիկայով աշխատելու՝ տարբեր նյութեր միախառնելով պատկեր ստանալու հմտություններ:

Առաջադրանք 28

Ուսումնասիրի՛ր առարկայի ուրվագիծը և ուրվապատկերը ստանալու հաջորդական քայլերը:

Առաջադրանք 29

Հասարակ մատիտը առանց թղթի հարթությունից կտրելու նկարի՛ր տարբեր ուղղությունների և տարբեր չափերի կոր գծեր: Թավ մատիտով ընդգծի՛ր ստացված պատկերի եզրագիծը, իսկ մնացած գծերը ջնջի՛ր ռետինով: Այնուհետև ամբողջ հարթությունը ներկիր ցանկացած մեկ գույնով:

Ուսումնասիրելով ուրվագիծ և ուրվապատկեր ստանալու ներկայացված նմուշօրինակները՝ աշակերտներին առաջարկվում է ինքնուրույն պատկերել ուրվագիծ, որն ամբողջովին ներկելով մեկ գույնով՝ կստացվի տվյալ առարկայի ուրվապատկերը: Եթե աշակերտը մինչ այս պարզապես անվանում, դիտարկում և տարբերակում էր ներկայացված ուրվապատկերները և ուրվագծերը, այս դեպքում հաջորդական քայլերով ինքնուրույն ստանում է ուվագիծ, ապա՝ ուրվապատկեր: Նա կարող է օգտվել ձախ հատվածի օրինակից և քայլերի ներկայացված հերթականությունից: Առաջադրանքն ամրապնդում է ուրվագծի և ուրվապատկերի մասին գիտելիքները, աշակերտը ձեռք է բերում ինքնուրույն պատկերման հմտություն և ինքնավստահություն: Դժվարությունների դեպքում կարելի է բռնել աշակերտի ձեռքը և ուղղորդել:

Առաջադրանք 30

Ուսումնասիրի՛ր առարկայի ձևն արտահայտելու հաջորդական քայլերը:

Առաջադրանք 31

Հասարակ մատիտը առանց թղթի հարթությունից կտրելու նկարի՛ր տարբեր ուղղությունների և տարբեր չափերի կոր գծեր, ստացված հարթությունները ներկի՛ր տարբեր երանգի կանաչ, կապույտ և դեղին գույներով: Շարունակի՛ր և ավարտի՛ր նկարը:

Առարկաների ձևի ուսումնասիրությանն ուղղված առաջադրանքը հաջորդում է ուրվագիծ և ուրվապատկեր նկարելու առաջադրանքին՝ դրանով իսկ աշակերտին ուղղորդելով դիտարկել նաև առարկայի ձևը: Այստեղ ևս նա կարող է օգտվել ձախ հատվածի օրինակից և քայլերի ներկայացված հերթականությունից: Ձևի արտահայտման ավարտական փուլում խթանելով աշակերտի ստեղծագործական երևակայությունը, համադրելու, զուգորդելու ունակությունները՝ կարելի է ուղղորդել նրան, այսպես կոչված՝ «խզբզման մեթոդով» պատկերելու ինչպես ծաղկած թփուտ (ըստ օրինակի), այնպես էլ ծառ, կենդանի, քաղաք և այլն՝ կախված նրանից, թե ինչպես է «խզբզել»:

Առաջադրանք 32

Այս և հաջորդ առաջադրանքում բերված օրինակների օգնությամբ դատարկ հատվածում պատկերի՛ր ցանկացած առարկայի ուրվագիծը, ուրվապատկերը, ապա՝ ձևը:

Առաջադրանք 33

Ուսումնասիրի՛ր ջութակի ուրվագծը, ուրվապատկերը և ձևը: Ասա՛, թե ինչով են նման և տարբեր:

Տվյալ առաջադրանքը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով կամ խմբերով, համեմատելով,

քննարկելով և աշակերտներին հնարավորություն տալով արտահայտել իրենց կարծիքը սեփական և ընկերների աշխատանքի վերաբերյալ: Առաջադրանքները (ներառյալ աշակերտի կատարած աշխատանքը) ի մի են բերում ուրվագիծը, ուրվապատկերը և ձևն արտահայտող հասկացությունները, դրանց արտահայտչական բնութագրիչները: Առաջադրանքներն ամփոփում են «Ուրվագիծ, ուրվապատկեր և ձև» բաժինը, միևնույն ժամանակ նախնական պատկերացում տալիս հաջորդ՝ «Ձև և ծավալ» բաժնի վերաբերյալ:

Առաջադրանք 34

Ուսումնասիրի՛ր բաժակի նկարները: Նկարագրի՛ր, թե ինչով են նման և ինչով են տարբերվում միմյանցից:

Առաջադրանքը միտված է ի մի բերելու մինչև այժմ ձեռք բերած գիտելիքները և այդ հենքի վրա ձևավորում պատկերացում նոր հասկացության՝ ծավալի մասին: «Ձև և ծավալ» բաժնի այս առաջադրանքում ակնառու երևում են բաժակի ուրվագիծը, ձևը և ծավալը: Առաջադրանքի միջոցով աշակերտը ինքնուրույն բացահայտում է ուրվագծի, ձևի և ծավալի ընդհանրությունները, տարբերությունները, ինչպես նաև ծանոթանում դրանց արտահայտչական առանձնահատկություններին:

Առաջադրանք 35

Պատկերի՛ր գնդի ձև ունեցող տարբեր առարկաներ: Գունավոր մատիտներով, պաստելով, գուաշով կամ ջրաներկով արտահայտի՛ր նրանց ծավալները՝ բացահայտելով ձևը:

Այս և ստորև նշված վարժությունների ժամանակ ի հայտ եկած դժվարությունների դեպքում կարելի է տրամադրել օրինակ կամ ուղղորդել:

Առաջադրանք *36*

Պատկերի՛ր որևէ խորանարդաձև առարկա պաստելով կամ գունավոր մատիտներով: Նշի՛ր քո աշխատանքի լուսավոր երանգները:

Առաջադրանք 37

Պատկերի՛ր բրգաձև առարկա ջրաներկով կամ գուաշով: Նշի՛ր քո աշխատանքի մուգ երանգները:

Առաջադրանքներն ուղղված են երկրաչափական տարբեր մարմինների ձև ունեցող առարկաները նկարչական տարբեր նյութերով պատկերելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Արտահայտելով իրերի ծավալային հարաբերությունները, լույսերն ու ստվերները տարբեր նյութերի արտահայտչական հնարավորությունների և առանձնահատկությունների միջոցով՝ աշակերտը ծանոթանում, փորձարկում է տարբեր նյութերով և միջոցներով աշխատելու եղանակները:

Առաջադրանք 38

Օգտվելով հավելվածից՝ փակցրու՛ նկարը համապատասխան տեղում (հավելված 5): Ի՞նչ է պատկերված ուրվագծի մեջ*:*

Առաջադրանք 39

Արտանկարի՛ր ձախ էջի ուրվագծի միջի նկարը սպիտակ ուրվապատկերի տեղում:

Առաջադրանքներն ուրվագծի և ուրվապատկերի միջոցով բացահայտում են աշակերտի՝ ձևի ընկալման աստիճանը: Հավելվածից փակցնելով ուրվագծին համապատասխանող նկարը՝

նա ուրվապատկերի մեջ արտանկարում է առարկայի, տվյալ դեպքում՝ բնակելի շենքի ձևը:

Առաջադրանք 40

Մատիտով միացրու՛ ուրվապատկերները համապատասխան առարկաների նկարներին: Ասա՛, թե ինչ երկրաչափական պատկերներ և մարմիններ ես տեսնում:

Առաջադրանք 41

Ասա՛ տերևի և ափսեի ուրվագծի, ուրվապատկերի, ձևի և ծավալի նմանություններն ու տարբերությունները:

Համադրելուն, զուգորդելուն, նմանություններն ու տարբերությունները բացահայտելուն միտված այս առաջադրանքները նպաստում են աշակերտի զուգորդական մտածողության ձևավորմանը, զարգացնում ուշադրությունը և զննողականությունը: Աշակերտը տեսականորեն ծանոթանում է նաև նման ձև, բայց տարբեր ծավալներ ունեցող առարկաների պատկերման առանձնահատկություններին: Դժվարությունների դեպքում կարելի է տրամադրել հուշումներ:

Առաջադրանք 42

Եզրագծի՛ր սափորի և գավաթի ուրվագիծը: Ջրաներկով, պաստելով կամ գունավոր մատիտներով արտահայտի՛ր լույսերն ու ստվերները: Գույնով ծածկի՛ր թղթի ամբողջ սպիտակ հարթությունը:

Ուսումնասիրելով վերոնշյալ բոլոր բաժինները, ի մի բերելով ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները՝ աշակերտը քայլ առ քայլ մոտենում է նատյուրմորտի պատկերմանը: Նյութի ընտրությունը

թողնելով ազատ՝ կարևորվում է լույսերի և ստվերների արտահայտումը, ինչպես նաև թղթի ամբողջ հարթությունը նախընտրած գույնով ծածկելը: Այսպիսով աշակերտը ձեռք է բերում թղթի ամբողջ հարթությունը տիրապետելու հմտություն: Առաջադրանքի միջոցով բացահայտվում են նրա նախասիրությունները գույնի, նյութի ընտրության հարցում, ինչպես նաև արտահայտվում է ծավալի արտահայտման տիրապետման աստիճանը:

Առաջադրանք 43

Արտանկարի՛ր ձախ կողմում պատկերված սափորը և գավաթը: Ջրաներկով, պաստելով կամ գունավոր մատիտներով ավարտիր նկարը:

Այս առաջադրանքում, ի տարբերություն նախորդի, որտեղ աշակերտը ստեղծագործաբար է պատկերում նատյուրմորտը, առաջարկվում է բնօրինակից նկարել նատյուրմորտ՝ ուշադրությունը կենտրոնացնելով առարկաների **ուրվագծին, ուրվապատկերին, ձևին, ծավալին, լույսին և ստվերին**: Այս առաջադրանքը կարելի է համարել այն կապող օղակը, որը հանգեցնում է առաջին առաջադրանքին, դրա ուսումնասիրությանը՝ այսպիսով հաստատելով, որ ուրվագծի, ուրվապատկերի, ձևի, ծավալի, լույսի, ստվերի ուսուցումը կարելի է սկսել ցանկացած բաժնից, ցանկացած առաջադրանքից՝ հաջորդաբար և խաչաձև ուսումնասիրելով կերպարվեստի արտահայտչամիջոցների՝ գիրք-տետրում ներկայացված խումբը:

ՆԱԽԱԳԻԾ

Բնանկարի ստեղծում ֆրոտաժ տեխնիկայով

Առաջադրանք 1-9

Նախագծային աշխատանքը նպատակ ունի առաջին հերթին սովորողների մոտ զարգացնել համագործակցային աշխատանքի հմտություններ: Աշակերտները ծանոթանում են տարբեր մաերևույթների, նյութերի և դրանց արտաքին ձևին, ուսումնասիրում դրանց բազմազանությունը, որը կարող է անսահման լինել, առանձնահատկություններին, որոնք կարող են տարբեր կիրառական նշանակություն ունենալ: Նախագծային աշխատանքում այս ամենի միավորման և կերպարվեստում նրանց կիրառական նշանակությունը տվյալ դեպքում **ֆրոտաժ** տեխնիկան է:

Գեղարվեստական այս տեխնիկայի անվանումը գալիս է ֆրանսերեն frottage (շփում) բառից: Թուղթը տեղադրվում է անհարթ մակերևույթ ունեցող առարկայի վրա, այնուհետև, գունավոր մատիտով կամ պաստելով շփելով, շարժելով թղթի մակերևույթի վրա՝ ստացվում է գունավոր դրոշմվածք (պատճեն), որն ընդօրինակում է տվյալ հյուսվածքը: Այս տեխնիկան առավել արտահայտչականություն է հաղորդում աշխատանքին ծավալային կերպարներ և տարածական պատկերներ ստեղծելիս: Հյուսվածքային տարբեր մակերևույթների և գունավոր մատիտների ու պաստելների օգնությամբ կարելի է ստանալ գեղեցիկ, յուրահատուկ տեսք ունեցող գունավոր թղթեր, որոնք լայնորեն կիրառվում են նաև ապլիկացիաներ ստեղծելու նպատակով: Նախագծային այս աշխատանքում աշակերտները նախ անհատական, ապա զույգերով և ամբողջ դասարանով ուսումնասիրում են ֆրոտաժ տեխնիկայով աշխատելու եղանակները, ստանում բազմաձև, բազմագույն և բազմերանգ գունավոր թղթեր,

որոնցով վերջնարդյունքում ստեղծում են համաստեղծագործություն՝ բնանկար:

Տվյալ բնանկարը կարելի է պատկերել վատմանի վրա և տեղադրել դրա համար նախատեսված պատին:

Առաջադրանքն ուսուցչին հնարավորություն կտա ինչպես ամբողջ դասարանի և յուրաքանչյուր աշակերտի ամփոփիչ գնահատման, այնպես էլ ինքնագնահատման, ինքնավերլուծության ու ինքնակատարելագործման համար:

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Բիծ (պիսակ) - Որևէ մակերևույթի՝ գույնով, երանգով, լույսով կամ ստվերով տարբերվող՝ առանձնացող սահմանափակ հատված:

Բնանկար (բնապատկեր) - Բնության՝ տեղանքի ընդհանուր տեսքը՝ տեսարանը: Բնության տեսարան վերարտադրող նկար՝ պատկեր: Գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է:

Գիծ (խազ) - Որևէ հարթության երկու կամ ավելի կետերը միացնող ուղիղ:

Գծանկար (գծապատկեր) - Գրաֆիկական միջոցներով (ուրվագիծ, գիծ, բիծ) հարթության վրա պատկերված ստեղծագործություն: Ընդհանուր առմամբ՝ գծերով ստեղծված պատկեր:

Գույն (երփ(ն), երանգ) - Առարկայից անդրադարձող լուսային ճառագայթներից աչքի ստացած տպավորությունը:

Գունանկար (գեղանկար, երփնանկար) - Որևէ հարթության վրա գունանյութերով (ջրաներկ, գուաշ և այլն) կատարված նկարչական ստեղծագործություն:

Գունահամակարգ (գունակարգ) - Իրականության գունային բազմազանությունը գեղագիտորեն վերակերպավորող գունահարաբերությունների համակարգ, գույնի երանգային հարաբերություններ:

Գունաշարք - Գույների հաջորդաշարք: Երանգային և միմյանց փոխլրացնող գույների հաջորդական դասավորությունը:

Դաջվածք (դրոշմ, տպվածք) - Թղթի, կտավի և այլ հարթության վրա դաջված, տպված նախշ: Դաջելու միջոցով ստացված նկար:

Դիմանկար (դիմապատկեր) – Դեմքի նկար, մարդու պատկերը ուսերից վերև: Գեղանկարում, գրաֆիկայում և

լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի դեմքերի պատկեր:

Եզրագիծ (բոլորագիծ, սահմանագիծ) - Առարկայի եզրերի արտաքին գծագրությունը:

Երանգ (նրբերանգ) - Որևէ գույնի նուրբ տարբերակ, գույնի նուրբ աստիճանային անցում դեպի մուգը կամ բացը, որևէ գույնի մուգ կամ բաց տարբերակ:

Լույս (ճառագայթ, փայլ, ճրագ) –Պատկերի լուսավոր՝ պայծառ հատված, որն արտացոլում է տարածության կամ առարկայի որևէ մասի առավել լուսավորվածությունը:

Լույսի աղբյուր - Գոյություն ունեն լույսի բնական և արհեստական աղբյուրներ: Մեզ համար լույսի հիմնական և բնական աղբյուրն Արեգակն է: Աստղերը նույնպես լույսի բնական աղբյուրներ են, սակայն մեծ հեռավորության պատճառով դրանցից մեզ հասնող լույսը շատ թույլ է: Լույսի բնական աղբյուր է նաև կայծակը: Լույս են արձակում նաև որոշ կենդանիներ, բակտերիաներ և միջատներ, օրինակ՝ լուսատիտիկը: Լույսի արհեստական աղբյուրները ստեղծվել են մարդու կողմից: Լույսի արհեստական աղբյուրներ են մոմի բոցը, էլեկտրական լամպը և այլն:

Խնդիր (հարց, առաջադրանք) - Հետազոտության՝ քննության առարկա հանդիսացող հարց: Այն, ինչ առաջարկվում է կատարելու կամ պահանջում է լուծում:

Ծավալ (մեծություն, տարածություն, բովանդակություն) - Որևէ առարկայի եռաչափ մեծություն, որը չափվում է խորանարդային միավորով, պատկերի եռաչափ տարածական արտացոլում:

Կանոն (կարգ, օրենք) - Որևէ բանի կատարման հաստատված կարգ, լայն առումով՝ այն ամենը, ինչ մեկընդմիշտ հաստատված է և դարձել է օրինաչափ:

Համակարգ (դասակից, կարգակից) - Ընդհանուր հատկանիշներով ընդհանրացող որոշ կարգի միավորների՝ տարբեր մասերի ամբողջություն: Որևէ տեսության՝ ուսմունքի հիմնական դրույթների ամբողջություն:

Հյուսվածք (հորինվածք, գործվածք) - Որոշակի կազմություն և համակցություն ունեցող միասնական համակարգ:

Ձև (տեսք, կերպարանք) - Առարկայի արտաքին տեսքը: Գեղարվեստական արտահայտության եղանակների համակարգը՝ որպես ստեղծագործության բովանդակության հաղորդման միջոց:

Մակատեսք (ծածկվածք, մշակվածք, արտաքին տեսք և ձև) - Տարբեր առարկաների հարթության արտաքին տեսքը և ձևը բնորոշող մշակման բնույթը, մակերևույթի տեսքը: Գեղարվեստական ստեղծագործության մակերեսի, նրա մշակվածության կերպը:

Մատիտ[1] - Փայտյա պատյանի մեջ ագուցած գրաֆիտի կամ չոր ներկի ձողիկ, որ գործածում են գրելու, նկարելու կամ գծագրելու համար: Լինում են հասարակ ու գունավոր: Տարբերակում են նրանց վրա գտնվող նշումներով.

Մ-Մգոտություն, մուգ /սևոտ/, blackness, мягкий, #1

Կ-Կարծրություն, կոշտություն, hardness, твердый, #3-4

Ն-Նրբագրություն /նուրբ, ճշգրիտ/, fine point, #2½

Մեթոդ (եղանակ, կարգ, կերպ, ձև) - Բնության և հասարակական կյանքի ուսումնասիրության ու ճանաչողության եղանակ:

---

[1]Տես՝ Աղյուսակ 1

Գործունեության՝ գործողությունների եղանակ՝ կերպ, նպատակին հասնելու միջոց:

Մեթոդիկա (կարգապահանջություն) - Ուսմունք այս կամ այն առարկայի դասավանդման մեթոդների մասին: Որևէ բան գործնականորեն կատարելու կանոնների համակարգ:

Նախագիծ (ծրագիր) - Աշխատության՝ ստեղծագործության նախնական և ընդհանուր քայլաշար, որի մեջ տրվում է կառուցվածքի (վերջնարդյունքի) ընդհանուր բնութագրությունը:

Նատյուրմորտ (իրանկար) - Անշարժ, անշունչ առարկաների, իրերի պատկերում, սովորաբար ներառում է կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, կենցաղային կամ մասնագիտական առարկաներ և այլն:

Ներդաշնակություն (համապատասխանություն) - Մասի և ամբողջի, ներքինի և արտաքինի, ձևի ու բովանդակության համաչափություն և միասնություն:

Նպատակ (առաջադրություն, ծրագիր) - Այն, ինչի ձգտում են, ուզում են հասնել, ձգտման առարկան: Ցանկալի, ակնկալվող վերջնարդյունք, որը պլանավորում և որին պարտավորվում են հասնել անձնական կամ կազմակերպական ցանկալի վերջնակետի ակնկալվող զարգացման պարագայում:

Շարժում (երերում, ծածանում, տատանում) - Մարմնի, առարկայի դիրքի փոփոխություն այլ մարմինների նկատմամբ:

Ռիթմ (կշռույթ) - Չափ, որևէ բանի հաջորդականության՝ պարբերականության, դադարների ու կրկնության տևողություն, համաչափ հերթագայություն:

Ստվեր (շվաք, մթություն) - Լույսի ցանկացած աղբյուրի ճառագայթներից որևէ առարկայով պաշտպանված՝ լույսից

զերծ մնացող տարածություն: Որևէ մակերևույթի, առարկայի վրա ընկնող մուգ անդրադարձում, որ ստացվում է հակառակ կողմից լուսավորված առարկայից:

Ուրվագիծ (եզրագիծ) - Առարկայի ընդհանուր տեսքի արտաքին գծագրությունը:

Ուրվապատկեր (ուրվանկար) - Ուրվապատկերային նկար: Առարկայի ընդհանուր տեսքի արտացոլանք, անդրադարձված հարթապատկեր:

Ֆրոտաժ - Ֆրանսերեն frottage (շփում) բառից: Գեղարվեստական տեխնիկա, երբ թղթի դատարկ թերթը տեղադրվում է անհարթ մակերևույթ ունեցող առարկաների վրա, այնուհետև մատիտով, պաստելով կամ այլ կարծր գունանյութով շփելով՝ թղթի հարթության վրա ստացվում է տվյալ հյուսվածքի գրաֆիկական դրոշմվածքը (պատճենը):

Աղյուսակ 1

Մատիտի կարծրության ցուցիչներ

Երանգ	Հայաստան	Եվրոպա	Ռուսաստան	ԱՄՆ
	2Մ	2B	2M	-
	Մ	B	M	#1
	ԿՄ	HB	TM	#2
	Ն	F	-	#2½
	Կ	H	T	#3
	2Կ	2H	2T	#4

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ա. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Ա. Ադամյան, Հ. Վ. Օհանյան, Արդյունավետ հարմարեցումներ: Որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան-2022, Հայաստան, էջ 25-30:
2. Երզնկյան Մ., Բաղդասարյան Ա. - Կերպարվեստի բառագիրք: Ուսումնական ձեռնարկ: Զանգակ-97 հրատ., Երևան, 2002, 80 էջ
3. Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա., Գևորգյան Ե. (Խմբ.) (2020) Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, էջ 9-20:
4. ՀՊՉ Կերպարվեստ առարկայի չափորոշիչ և ծրագիր: ՀՀ կառավարության որոշում, № 136-Ն, 2021թ., 212 էջ:
5. Սարգսյան Ս. Մ. - Կերպարվեստ 2, Ուսումնական նյութեր աշակերտների համար: «Աստղիկ գրատուն» հրատ. Երևան, 2021թ.:
6. Broderick A., Mehta H., & Reid, D. K. (2005). Differentiating instruction for disabled students in inclusive classrooms
7. Carol Henry - Middle School Art. Issues of Curriculum and Instruction. Publisher: Natl Art Education Assn. 1996. 128 pages.

8. Darewych O. H., Carlton N. R., & Farrugie, K. W. (2015). Digital technology use in art therapy with adults with developmental disabilities. Journal on Developmental Disabilities, 1(2),95-102.
9. Derby J. (2016). Confronting ableism: Disability studies pedagogy in pre-service arteducation. Studies in Art Education, 57, 102-119.
10. Guay D. M. (1993). Normalization in art with extra challenged students: A problem solvingframework. Art Education, 46(1), 58-63.
11. LaMore K. L., & Nelson D. L. (1993). The effects of options onperformance of an art project in adults with mental disabilities. American Journal of Occupational Therapy, 47, 397-401.
12. Pugach M. C., & Warger C. L. (2001). Curriculum Matters: Raising Expectations for Students with Disabilities. Remedial and Special Education, 196-213.
13. Siraj I. & Taggart B. (2014). Exploring Effective Pedagogy in Primary Schools: Evidence from Research. London: Pearson11.
14. Wendy Custable, Justin Fisk, Jonathan Grice, Darshan M. Jain, & 6 more - Proficiency-Based Grading in the Content Areas: Insights and Key Questions for Secondary Schools. Publisher: Solution Tree Press; 1st edition. 2019. 431 pages.
15. Wexler, Alice & Luethi-Garrecht, Aleánna. (2015). Beyond Accommodations: Designing for Nonverbal/Nonauditory Learners in the Inclusive Art Room. Art Education. 68. 14-21.
16. Yoder Genevieve,(2018). "Adapted Art Curriculum: A Guide for Teachers of Students With Disabilities" (2018). Graduate Education Student Scholarship.
17. https://bararanonline.com/

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ